ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-5/25-I/NBE

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

20 հունվարի 2025թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Գահնապետյան Արամ Ժ/Պի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 237 370 000 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները,

2.2.4 Սույն Պայմանագրի Հավելված N 4-ով «Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի իրականացմանը ներգրավված աշխատողների մասին ներկայացված տեղեկատվության Պայմանագրի գործողության ժամանակահատվածում փոփոխվելու՝ աշխատողների փաստացի քանակի նվազման կամ ավելացման դեպքում Կազմակերպությունն իրավունք ունի Պայմանագրով նախատեսված աշխատավարձի ընդհանուր ֆոնդի շրջանակներում կատարել աշխատավարձի ֆոնդի վերաբաշխում աշխատողների փաստացի անվանացանկի համապատասխան:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3.1 բացառել Ծրագրի ֆինանսավորման ծավալը նվազելու պատճառաբանությամբ արդյունավետ աշխատող գիտական աշխատողների աշխատանքային պայմանների վատթարացումը,

2.4.3.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից բացառել վարորդի աշխատավարձի և ծառայողական մեքենայի հետ կապված որևէ ծախս, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսեր,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող

փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 237 370 000 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	0004, ք. Երևան, Ադմիրալ Իսակովի պող. 24 Հ/հ՝ 900018005588 ՀՎՀՀ՝ 01836525 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ _____ (ստորագրություն)	Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն)
Աշոտ Սերոբի Ստեփյան	Գահնապետյան Գրիգոր Ժ/Պ
Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն)	Ոսկանյան Պատվական Ստեփանի

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-5/25-I/NBE պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Գահնապետյան Արամ Ժ/Պը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-5/25-I/NBE պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 237 370 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

Կ. Տ.

Աշոտ Սերոբի Սաղյան

Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Կ. Տ.

Գահնապետյան Արամ Ժ/Պ

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-5/25-I/NBE պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳԾ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	3
Այլ պարբերականում հրապարակում՝	25
Գրքեր, մենագրություններ՝	3
Գիտաժողովի նյութեր՝	15

Կազմակերպության տնօրեն՝ _____ Գահնապետյան Արամ Ժ/Պ
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Մազմանյան Կարեն Հովհաննեսի
(ստորագրություն)

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-5/25-I/NBE պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	232 298 892	46 459 778	58 074 723	58 074 723	69 689 668
2.	տնտեսական ծախսեր՝	3 357 525	671 505	839 381	839 381	1 007 258
3.	այլ ծախսեր՝	1 713 583	342 716	428 395	428 395	514 077
Ընդամենը՝		237 370 000	47 473 999	59 342 499	59 342 499	71 211 003

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Գահնապետյան Արամ Ժ/Պ

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Ռուզաննա Հոյայի Ղազարիկյան

Հ.Դ.Ս.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-5/25-I/NBE պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/h	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**3 357 525**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	2 400 000
2.	*գազի ծառայություն*	685 525
3.	*ջրամատակարարման ծառայություն*	72 000
4.	*կապի ծառայություն*	200 000
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**1 713 583**
1.	նյութեր	768 583
2.	գործուղումներ	100 000
3.	հրատարակման ծախսեր	845 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Գահնապետյան Արամ Ժ/Պ

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Գոհարանում Հայկի Պապիկյան

Հավելված N 5
«20» հունվարի 2025 թ.
N 1-5/25-I/NBE պայմանագրի

Առաջադրանք
«Գիտական և գիտատեխնիկական գործունեության
ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության՝ փորձագիտության բնագավառում գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական, գիտաուսումնական աշխատանքների կատարման ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝

Կազմակերպությունում իրականացվելիք աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներն ըստ էության համապատասխանում են Կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված գործունեության հիմնական նպատակներին, այն է՝

-իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակաուղղված գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպում և իրականացում,

-դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,

-հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում և այլ ուղղություններով քրեաբանական հետազոտությունների կազմակերպում և իրականացում,

-քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակում, փորձարկում և ներդրում,

-քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների,

վերլուծությունների կազմակերպում,

-փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում կազմակերպելու նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ թեմաներով ծրագրեր-սեղմագրերի մշակում և ներդրում,

-փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստման հետ կապված գործընթացների գիտամեթոդական ապահովում (հարցերի մշակում, հարցաշարերի կազմում և այլն):

4. Աշխատանքի բովանդակությունը՝

Կազմակերպությունը 2025 թվականի ընթացքում նախատեսում է առաջնահերթ իրականացնել հետազոտական աշխատանքներ (գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական), այդ թվում՝ գիտաժողովների և համաժողովների մասնակցություն, սեմինարների իրականացում՝ նպատակաուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը): Կազմակերպությունում համաձայն հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի 2025 թվականին գործելու են փորձագիտական 28 տեսակների շրջանակներում 21 փորձագիտական բաժինները (նյութագիտական, սննդամթերքի և խմիչքների, հողագիտական և կենսաբանական, էկոլոգիական, տնտեսագիտական և հաշվապահական, շինարարատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, ապրանքագիտական, ձգաբանական, հետքաբանական, տեսաձայնագրային, ֆոտոտեխնիկական և դիմանկարային, ձեռագրաբանական, փաստաթղթաբանական, ավտոտեխնիկական, պայթյունատեխնիկական, պայթյունատեխնոլոգիական և հրդեհատեխնիկական, մշակութաբանական, համակարգչատեխնիկական, հոգեբանական, դատաբժշկական, դատահոգեբուժական և դեպքի վայրի) իրագործելով դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման գիտական և մեթոդական ապահովումը՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ստացմանը (կիրառմանը) և դատական փորձաքննությունների ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխան մեթոդների կիրառմամբ իրականացումը՝ ապահովելով դատափորձագիտական բնագավառի ենթակառուցվածքների պահպանումն ու զարգացումը: 2025 թվականի ընթացքում իրագործվելու են նաև ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքների գիտական ապահովումը, ինչպես նաև քրեաբանական գիտահետազոտական աշխատանքները՝ ուղղված Հայաստանի

Հանրապետությունում հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառների և նպաստող պայմանների, դրանց կրիմինոլոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտմանն ու կանխարգելմանը: Նշված աշխատանքները նպատակաուղղվելու են նաև հայ-ամերիկյան (INL) միջկառավարական ծրագրի նպատակների շարունակականությունն ապահովելուն:

Այսպիսով, Կազմակերպությունում 2025 թվականի ընթացքում իրականացվելու են գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական բնույթի հետևյալ հիմնական աշխատանքները.

- **Գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ.**

2025թ-ի ընթացքում Կազմակերպությունն ակնկալում է գիտական գործունեության կազմակերպման արդյունավետության շարունակական բարձրացմամբ իրականացնել փորձագիտական նեղ-մասնագիտական ուղղությունների զարգացման, եղած հնարավորությունների պահպանման, կատարելագործման և նորարարական մոտեցումների ներդրման աշխատանքները:

Կազմակերպության գիտական գործունեություն իրականացնող անձնակազմի կողմից նախանշվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության բնագավառներին առնչվող մի շարք նոր գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը), այդ թվում՝

-«Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքի որոշման հաշվարկավերլուծական համակարգերի ձևավորման և ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտություններում դրանց կիրառման չափանիշների գնահատումը» /թեմայի ղեկավար՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ/,

-«Հարկման տարբեր համակարգերով հարկվող տնտեսավարող սուբյեկտների հարկային պարտավորությունների վերլուծության փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները և խնդիրների վերհանումը՝ օրենսդրական կարգավորումների համատեքստում» /թեմայի ղեկավար՝ տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Համակարգչային հափշտակությունների քրեաբանական գործոնների վերլուծությունը և կանխարգելման միջոցների մշակումը Հայաստանի Հանրապետությունում» /թեմայի ղեկավար՝ քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ/,

-«Գլխուղեղի ախտահարմամբ տառապող պացիենտների կողմից հանրային վտանգավոր արարքների հոգեախտաբանական և սոցիալ-հոգեբանական հայեցակարգերը ներկայիս քրեադատավարական իրավակարգավորումների համատեքստում» /թեմայի ղեկավար՝ դատահոգեբուժական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից արգելակման և մանևրման միջոցով ճանապարհատրանսպորտային պատահարները կանխարգելելու մեխանիզմի պարզմանն ուղղված գիտական հիմքերի վերհանումն ու հետազոտության մեթոդաբանության մշակումը» /թեմայի ղեկավար՝ ավտոտեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Տեսաձայնագրային հետազոտություններում կիրառման նպատակով նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ արհեստական բանականության և նեյրոնային ցանցերի ներդրման մեթոդական մոտեցումների մշակումը» /թեմայի ղեկավար՝ տեսաձայնագրային, ֆոտոտեխնիկական և դիմանկարային փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Միևնույն անձի կողմից տարբեր տառադարձություններով կատարված ստորագրությունների հետազոտման մեթոդական խնդիրների վերհանումը՝ հետագայում այդ մեթոդների կատարելագործմանն ուղղված նոր մոտեցումների մշակման նպատակով» /թեմայի ղեկավար՝ ձեռագրաբանական և հեղինակային փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Մարիխուանա տեսակի թմրամիջոցի պատրաստման վաղեմության պարզման հատկանիշների հետազոտումը և գնահատման չափանիշների վերլուծությունը՝ ըստ տվյալ թմրամիջոցի բաղադրության մեջ պարունակվող կանաբինոիդային շարքի ալկալոիդներ հանդիսացող տետրահիդրոկանաբինոլ, կանաբինոլ և կանաբիդիոլ տեսակի նյութերի որակական և քանակական ցուցանիշների» /թեմայի ղեկավար՝ նյութագիտական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Գազավառոդային շիթի զարգացման և կրակոցի լրացուցիչ գործոնների նստեցման ու դրանց հետազոտման արդյունքների գնահատման առանձնահատկությունները բազմաշերտ արգելքների վրա «ԱԿ-47» և «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգներից կրակոցների ժամանակ» /թեմայի ղեկավար՝ ձգաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Մնացորդային մեթոդի կիրառմամբ էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի չափի պարզման մեթոդաբանության առանձնահատկությունները և խնդիրների վերհանումը» /թեմայի ղեկավար՝ ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Նույնականացման նպատակով պիտանի հատկանիշների վերհանմամբ փաստաթղթի վրայից մարդու ձեռքի քրտնաճարպային հետքերի երևակման

առանձնահատկությունների և դրանցում առկա առանձին նյութերի հետազոտման արդի գործիքային մեթոդաբանության մշակումը» /թեմայի ղեկավար՝ փաստաթղթաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-Հրդեհի օջախային հատվածին և հրդեհի տարածման ուղիներին բնորոշ հետքերի հայտնաբերումը, դրանց համակարգումը և մեթոդական ձեռնարկի մշակման նպատակով առանձնահատկությունների վերլուծությունը /թեմայի ղեկավար՝ պայթյունատեխնիկական, պայթյունատեխնոլոգիական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Նեղ մասնագիտական տարբեր բնագավառների բժշկական օգնության և սպասարկման դեֆեկտների ու անբարենպաստ ելքերի միջև պատճառահետևանքային կապերի փորձագիտական գնահատականը» /թեմայի ղեկավար՝ դատաբժշկական փորձաքննությունների բաժնի պետ/:

Հարկ է նաև նշել, որ 2025թ-ին շարունակվելու են գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքների իրականացումը նախորդ տարիներին նախանշված մի շարք ուղղություններով, այդ թվում՝

-«Տարբեր տարիքային խմբերի հետ իրականացվող հետազոտական աշխատանքներում արդի պահանջներին համապատասխան այլընտրանքային մեթոդների կիրառելիության գիտական հիմնավորումը դատահոգեբանական փորձաքննությունների արդյունավետության և հուսալիության բարձրացման նպատակով» /թեմայի ղեկավար՝ դատահոգեբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Գործվածքների վրա արյան հետքերի վաղեմության որոշման հատկանիշների հետազոտումը՝ հաշվի առնելով հետքերի վրա ազդող գործոնների գնահատման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ կենսաբանական հետքերի փորձաքննությունների բաժանմունքի պետ/,

-«Մարդու կենսաբանական նմուշներով ԴՆԹ նույնականացման առանձնահատկությունների վերլուծությունը և մեթոդական մոտեցումների մշակումը» /թեմայի ղեկավար՝ դատագենետիկական փորձաքննությունների բաժանմունքի փորձագետ/,

-«Էլեկտրատեխնիկական փորձաքննությունների արդի խնդիրները և դրանց լուծման արդյունավետ ուղիների վերլուծությունը» /թեմայի ղեկավար՝ պայթյունատեխնիկական, պայթյունատեխնոլոգիական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Մարիխուանա տեսակի թմրամիջոցի և կանեփ բույսի նախկինում մեկ ամբողջություն և/կամ միևնույն բույսից պատրաստված լինելու հատկանիշների գնահատման առանձնահատկությունների վերլուծությունը՝ ըստ դրանցում կանաբինոիդային շարքի ալկալոիդների որակական և քանակական պարունակությունների» /թեմայի ղեկավար՝ թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի փորձաքննությունների բաժանմունքի փորձագետ/,

-«Բարդ մատրիցային կենսաբանական ծագման նմուշներում, մասնավորապես՝ մազի և եղունգի մատրիցաներում «Agilent LC-MS-MS 6475» եռակի քառաբևեռ մասսպեկտրաչափով համակցված հեղուկային քրոմատոգրաֆի կիրառմամբ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, թունավոր, խիստ ներգործող նյութերի և դրանց մետաբոլիտների հայտնաբերմանն ուղղված օպտիմալացված հետազոտական արդյունավետ մեթոդների մշակումն ու արդյունքների գնահատման գիտական հիմնավորումը» /թեմայի ղեկավար՝ քիմիական (կենսաքիմիական) բաժանմունքի պետ/,

-«Կերպարվեստի բնագավառի փորձագիտական հետազոտության՝ բնօրինակի վավերացման, ոճական վերլուծության և գնահատման ժամանակակից մեթոդների կատարելագործման ուղիների բացահայտումը» /թեմայի ղեկավար՝ մշակութաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«ՀՀ-ում առկա որոշ պոչամբարների հարակից տարածքների հողային ռեսուրսներում ծանր մետաղների կոնցենտրացիաների տվյալների բազայի ձևավորումն ու սահմանային թույլատրելի (ֆոնային) կոնցենտրացիաների հետ համադրված վերլուծության և տեխնածին աղտոտման կանխարգելման արդյունավետ ուղիների վերհանումը» /թեմայի ղեկավար՝ նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ, էկոլոգիական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Շարժական գույքի (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) առանձնահատկություններից ելնելով ըստ մաշվածքների տեսակների դրանց արժեքների պարզման համար համապատասխան գործակիցների կիրառման գիտական հիմնավորումը՝ մեթոդաբանության կատարելագործմամբ» /թեմայի ղեկավար՝ ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնների խախտման հետևանքով քաղաքաշինական բնագավառում տեղ գտնող դժբախտ դեպքերի ճարտարագիտատեխնիկական հետազոտությունների արդյունքների հիման վրա կանխարգելման արդյունավետ ուղիների համակարգային վերլուծությունը» /թեմայի ղեկավար՝ ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Հետքաբանական փորձաքննություններում ճանապարհատրանսպորտային պատահարների՝ վթարների և վրաերթերի մեխանիզմների պարզման ընթացքում կիրառվող արդի մեթոդաբանության կատարելագործմանն ուղղված արդյունավետ ուղիների մշակումը» /թեմայի ղեկավար՝ հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«Հայրենական և արտասահմանյան արտադրության լայն սպառում ունեցող ալկոհոլային խմիչքների որակի և անվտանգության պահանջների համապատասխանության փորձագիտական հետազոտությունների արդյունավետ

մեթոդների մշակման ու արդյունքների գնահատման հիմքերը» /թեմայի ղեկավար՝ սննդային փորձաքննությունների բաժնի փորձագետ/,

-«ՀՀ Տավուշի մարզի պահաբաժիններում աճող ծառերի որոշ տեսակների աճի ինտենսիվության ցուցանիշների գնահատումն ու ստացված տվյալների համակարգային վերլուծությունը՝ անտառվերականգնման գործընթացում առավել նպատակային ծառատեսակների պարզման համար» /թեմայի ղեկավար՝ հողագիտական և կենսաբանական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Համակարգչատեխնիկական փորձագիտական հետազոտությունների համար կիրառելի արդի մեթոդական մոտեցումների և ծրագրային ապահովումների հետազոտումն ու արդյունքների գնահատումը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված գործողությունների լիարժեք վերծանման և փորձագիտական գնահատման նպատակով» /թեմայի ղեկավար՝ համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/,

-«Շինարարատեխնիկական փորձագիտական հետազոտությունների բնագավառում «Cyclon 3DR» ծրագրային ապահովման միջոցով լազերային սկանավորման տվյալների վերլուծության արդյունավետ ուղիների մշակումը» /թեմայի ղեկավար՝ շինարարատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ/:

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի (հաստատված է ՀՀ կառավարության 27.03.2008թ.-ի № 1039-Ն որոշմամբ) 10-րդ կետի 47-րդ ենթակետով նախատեսված միջոցառումներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 11.06.2009թ.-ի № 638-Ն որոշմամբ Կազմակերպության կազմում գործող Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից իրականացվող քրեաբանական հետազոտությունների շրջանակներում 2025 թվականին կատարվելու է զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի և առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների քրեաբանական գործոնների բացահայտում: Մասնավորապես, ներկայացվելու է նշված հանցատեսակների քանակական և որակական ցուցանիշները, հետևանքները, լատենտայնությունը, պատճառական համալիրը, անհատական հանցավոր վարքը պայմանավորող գործոնները, հանցագործի բնութագիրը և կառուցվածքը, հանցագործների դասակարգումը, մշակվելու է խնդրո առարկա հանցատեսակների կանխարգելման առաջարկություններ:

2025թ-ի ընթացքում Կազմակերպությունում շարունակվելու է համագործությունը միջազգային դատափորձագիտական և գիտական առաջատար կենտրոնների հետ, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել դատափորձագիտական բնագավառում կատարվող աշխատանքների արդյունավետությունը և ստացվող արդյունքների արժանահավատությունը՝ օգտագործելով նաև դատական փորձաքննության ժամանակակից մեթոդներն ու հնարավորությունները:

Կազմակերպությունը, հանդիսանալով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) լիիրավ անդամ, շարունակաբար մասնակցելու է «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ի (FWG) աշխատանքներին, ինչպես նաև ENFSI-ի տարեկան համաժողովին և կազմակերպվող այլ աշխատանքներին: 2025թ-ին նախատեսվում է շարունակել միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արդյունքների հավաստիության բարձրացմանը: Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) հետ համագործակցության շրջանակներում 2025թ.-ի ընթացքում նախատեսվում է նաև շարունակել աշխատանքները ENFSI-ի կողմից մշակված լավագույն փորձի ձեռնարկների (Best Practice Manual, (BPM)) տվյալների տեղայնացման ապահովման ուղղությամբ:

- **Գիտագործնական բնույթի աշխատանքներ.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական փորձաքննությունների իրականացման գործընթացն իրենից ներկայացնում է կոնկրետ դեպքում համապատասխան հատուկ գիտելիքների կամ հմտությունների կիրառմամբ իրականացվող գիտագործնական աշխատանքի տեսակ, նախատեսվում է 2025թ-ին կազմակերպել մի շարք գիտագործնական սեմինարներ և մասնագիտական խորհրդակցություններ՝ նպատակաուղղված արդի փորձագիտական խնդիրների քննարկմանը, վերլուծությանն ու լուծման հնարավոր ուղիների նախանշմանը: Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացմանը մասնակցող անձնակազմի կողմից իրականացվելիք նշված աշխատանքներին, բացի Կազմակերպության համապատասխան աշխատողներից, նախատեսվում է առաջարկության դեպքում մասնակից դարձնել նաև այլ փորձագիտական կառույցների փորձագետների, ՀՀ ԳԱԱ համակարգում գործող ինստիտուտների համապատասխան մասնագետների, Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների և պետական այլ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Գիտագործնական բնույթի աշխատանքների բարելավման և միջազգային գործընկեր կառույցների առաջավոր փորձին ծանոթանալու, կիրառվող մեթոդիկաների, հետազոտական տեխնոլոգիաների և դատական փորձաքննությունների ոլորտում կիրառվող արդի սարք-սարքավորումների հնարավորությունների մասին պատշաճ իրազեկման և նոր սարք-սարքավորումների ներդրման հնարավորությունների և անհրաժեշտության դիտարկման, առկա հնարավորությունների ընդլայնման նպատակով Կազմակերպությունը 2025թ-ին

շարունակելու է ակտիվ մասնակցել միջազգային գործընկեր կառույցների կողմից կազմակերպվող առցանց սեմինարներին, ինչպես նաև միջազգային գործընկեր փորձագիտական կառույցների կողմից կազմակերպվելիք տարբեր գիտական միջոցառումներին:

2025թ-ին Կազմակերպությունը շարունակելու է համագործակցությունը նաև ԱՊՀ մի շարք երկրների, Վրաստանի Հանրապետության համանման դատափորձագիտական կառույցների հետ միջազգային կապերի ամրապնդման և փոխգործակցության ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով զարգացնել Կազմակերպության գիտամեթոդական հնարավորությունները, մասնավորապես՝ կնքված երկկողմանի համաձայնագրերի շրջանակներում նախատեսվում է քննարկել դատափորձագիտական ոլորտի գործնական խնդիրների լուծման, տեղեկատվական տվյալների փոխանակման, ինչպես նաև գիտական և փորձագիտական տեխնոլոգիաների կատարելագործման հետ կապված հարցերը:

Կազմակերպությունը գիտագործնական բնույթի աշխատանքների շրջանակներում 2025թ-ի ընթացքում նախատեսում է նաև շարունակել մասնակցությունը N 545 «Դատափորձաքննության» Միջպետական տեխնիկական կոմիտեի աշխատանքներին՝ մասնակցելով ներկայացվող միջպետական ստանդարտների նախագծերի մշակման գործընթացին:

2025թ-ին նախատեսվում է վերլուծել և ըստ անհրաժեշտության շարունակաբար արդիականացնել Կազմակերպությունում գործող փորձագիտական ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգները և ընթացակարգերը, ինպես նաև Կազմակերպությունում փորձաքննությունների (նաև փորձարկումների) կատարման շրջանակներում իրականացվող հետազոտությունների ընթացքում կիրառվող մեթոդների և մեթոդիկաների, ընթացակարգերի, մասնագիտական գրականության, ստանդարտների, այլ իրավական ակտերի և վերաբերելի փաստաթղթերի հիմնական ցանկերը:

2025թ-ին նախատեսվում է շարունակել Կազմակերպության փորձագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը նպատակաուղղված համապատասխան մասնակցությունը՝ այդ թվում՝ ներպետական և միջազգային առցանց գիտաժողովներին, սեմինարներին, գործնական դասընթացներին, գիտագործնական կլոր սեղաններին և այլ միջոցառումներին:

2025թ-ին շարունակական բնույթ են կրելու Կազմակերպությունում դեռևս նախորդ տարիներից սկսած մի շարք փորձագիտական բազաների ձևավորման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օրգանական լուծիչների, թմրանյութերի, հոգեմետ նյութերի, թունավոր նյութերի, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների, գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ

նյութերի արգասիքների, պարենային և ոչ պարենային ապրանքների, նաև անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային ու կենսագրական տվյալների և այլն:

2025թ-ին նախատեսվում է դատափորձագիտական բնագավառում դենդրոխրոնոլոգիական գործիքային «LINTAB» LTM06-E մոդելի սարքի և TSAP-Win համակարգչային ծրագրի միջոցով ապօրինի ծառահատումների հիմնական օբյեկտ հանդիսացող ծառատեսակների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում տարածված և միևնույն բնակլիմայական պայմաններում աճող մերկասերմ և ծածկասերմ ծառերի որոշ տեսակների աճի ինտենսիվության տարբերությունների ուսումնասիրությունը՝ որպես հետազոտության օբյեկտ ընդունելով հատված և կանգուն ծառերից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերները: Շարունակվելու է նաև ծառերի աճի ինտենսիվության բազայի համալրման աշխատանքները՝ որպես խմբավորման հատկանիշ ընդունելով Հայաստանի Հանրապետությունում դրանց տարածքային պատկանելիությունը: Ստեղծված և համալրվող բազան հնարավորություն կընձեռի իրականացնել փորձագիտական համեմատական հետազոտություններ ապօրինի ծառահատումների ժամանակ հատված ծառերի տարածքային պատկանելիության, ինչպես նաև հատման վաղեմության ստույգ ժամկետների (տարի, սեզոն) պարզման ուղղությամբ:

2025թ-ին շարունակվելու են «Genetic Analyzer 3500» գործիքային սարքի և «GeneMapper™ ID-X Software v1.6» համակարգչային ծրագրի միջոցով դատագենետիկական փորձագիտական հետազոտությունների ԴՆԹ տվյալների պահոցի ձևավորման գործընթացը՝ ներառելով ԴՆԹ սեկվենավորված և համեմատական հետազոտության համար պիտանի ԴՆԹ-բնութագրերը:

- **Գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ.**

Կազմակերպության կողմից 2025թ-ի ընթացքում շարունակվելու են իրականացվել գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ, մասնավորապես.

-2025թ-ին նախատեսվում են «Agilent» ֆիրմայի MSD-5977C մոդելի մասս-սպեկտրոմետրով համակցված GC-8890 մոդելի գազային քրոմատագրման սարքով մի շարք թմրամիջոցների պատրաստման տեխնոլոգիաների պարզման ուղղությամբ անհրաժեշտ հետազոտությունների կատարման նպատակով իրականացնել համապատասխան մեթոդների ներդրման և հետազոտության արդյունքերի վերլուծության համար անհրաժեշտ տվյալների բազայի (գրադարանների) պարբերական թարմացումներ: Վերջինս հնարավորություն կտա ներդրված մեթոդների կիրառմամբ հետազոտել մի շարք թմրամիջոցներ և դրանցում հայտնաբերել ու համապատասխան գրադարանների միջոցով նույնականացնել ինչպես այդ թմրամիջոցների, այնպես էլ դրանց սինթեզի ելանյութերը և/կամ որոշել

միջանկյալ նյութեր հանդիսացող նյութերի որակական և քանակական ցուցանիշները, ինչը և հնարավորություն կտա պարզելու տվյալ թմրամիջոցների պատրաստման տեխնոլոգիաները:

-2025թ-ին նախատեսվում է ԴՆԹ քանակական ելքերի և ստացված ԴՆԹ բնութագրերի գենետիկական հատկանիշների լիարժեքության ապահովման նպատակով իրականացնել թարմ ոսկրային մնացորդներից ԴՆԹ անջատման ստանդարտ ընթացակարգերի կիրառմամբ մարդկային ծագման հնացած ոսկրային մնացորդներից ԴՆԹ անջատման հետազոտական աշխատանքներ՝ հիմք ընդունելով ոսկրային մնացորդի տեսակը և արտաքին դեգրադացման հատկանիշները, ինչպես նաև՝ նմանօրինակ նմուշներից ԴՆԹ անջատման մեթոդների մոդիֆիկացմամբ օպտիմալացնել քանակական ելքերը և փորձագիտական գնահատման արդյունքում առաջարկել նոր մեթոդական մոտեցումներ:

-2025թ-ին նախատեսվում է Agilent ընկերության HP-6890 մոդելի գազային քրոմատոգրաֆի միջոցով իրականացնել տարատեսակ ոգելից խմիչքների՝ ցորենի, մրգահատապտղային օղիների և կոնյակների (այդ թվում կոնյակի սպիրտների) արոմատիկ միացությունների, եթերների, ալդեհիդների, բարձր սպիրտների, ինչպես նաև ցնդող միացությունների առկայության ու քանակությունների որոշում և ստացված արդյունքների վերլուծություն: Նախատեսվում է 50մ երկարությամբ ապակյա մազանոթային HP-FFAP աշտարակի կիրառմամբ գազ-քրոմատոգրաֆիկ մեթոդով պարզել ալկոհոլային խմիչքների իսկությունը՝ համեմատելով տարբեր արտադրողների բնօրինակ գործարանային արտադրության նմուշների միկրոբաղադրիչների կազմի և քանակի հարաբերակցության փոփոխության հետ:

-2025թ-ի ընթացքում Կազմակերպության համապատասխան մասնագետները, ըստ անհրաժեշտության, շարունակելու են իրենց ակտիվ մասնակցությունն ու համագործակցությունը ցուցաբերել ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ վարչապետի աշխատակազմին կից ազգային անվտանգության խորհրդի գրասենյակի հետ թմրանյութերի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորներին վերաբերող տարաբնույթ հարցերի քննարկմանը, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունենալ նոր ի հայտ եկած ժամանակակից թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը ՀՀ կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, պրեկուրսորների զգալի, խոշոր եվ առանձնապես խոշոր չափերը. թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» 27.06.2018թ. թիվ 707-Ն որոշման մեջ ընդգրկելու, համապատասխան անհրաժեշտ

փոփոխություններ կատարելու, ինչպես նաև այլ ոլորտներում տարվող աշխատանքներում՝ ըստ Փորձաքննությունների ազգային բյուրոյի մասնակցությամբ կամ կարծիքի ներկայացվող առաջարկությունների:

-2025թ-ին նախատեսվում է շարունակել իրականացնել փորձաքննությունների շրջանակներում ներկայացվող բուսական օբյեկտների (կանեփի բույս, մարիխուանա, հաշիշ), ինչպես նաև հողի փորձանմուշների տարրական (հանքային) կազմի հետազոտման արդյունքների համադրված վերլուծություններ՝ կիրառելով առավել զգայուն գործիքային մեթոդներ՝ նպատակ ունենալով պարզել դրանց համեմատական գնահատման օրինաչափությունները: Ստացված արդյունքների հիման վրա նաև նախատեսվում է իրականացնել նոր մեթոդական մոտեցումների մշակումներ:

-2025թ-ի ընթացքում նախատեսվում է «Agilent LC-MS-MS 6475» եռակի քառաբևեռ մասսպեկտրաչափի հետ համակցված հեղուկային քրոմատոգրաֆի կիրառմամբ իրականացնել կենսաբանական նմուշներում, մասնավորապես՝ մազի և եղունգի մատրիցաներում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, թունավոր, խիստ ներգործող նյութերի հայտնաբերմանն ուղղված դատաքիմիական (քիմիկոտոքսիկոլոգիական) հետազոտական մեթոդների տեղայնացում, փորձարկում և ներդրում: Նախատեսվում է նաև իրականացնել աշխատանքներ նմուշապատրաստման և հետազոտման գործընթացի օպտիմալացված էֆեկտիվ մեթոդների կատարելագործման ուղղությամբ՝ բացառելու համար հետազոտելի նմուշների աղտոտման և սխալանքի բերող որևէ մարդածին կամ այլ գործոնների հավանական ազդեցությունը, ինչպես նաև գնահատելու համար հետազոտելի բարդ մատրիցային նմուշները (մազ, եղունգի եզրային կտրվածքներ), այդ թվում՝ հսկվող նյութեր պարունակող հետքերով արտաքին աղտոտվածության առկայությունը, ինչպես նաև բացառել դրանց ազդեցությունը տվյալ նմուշներում հսկվող նյութերի և դրանց մետաբոլիտների հետազոտության արդյունքների վրա: Նախատեսվում է իրականացնել նաև վերոնշյալ մեթոդներին համապատասխան ընթացակարգերի մշակումներ:

- 2025թ-ին շարունակվելու են ուսումնասիրվել «Niton XL3T 980» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու լրամշակված ընթացակարգի հիման վրա տարբեր մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի, հանքային ապարների բաղադրակազմերի փորձագիտական հետազոտման առանձնահատկությունները, ինչպես նաև իրականացնել «Niton XL3-96549» սերիայի սարքի «Руды» և «Почвы» ռեժիմների կիրառմամբ հողային ռեսուրսներում ծանր մետաղների քանակական պարունակությունների պարզման մեթոդի փորձարկում, տվյալների հավաքագրում և դրանց հիման վրա հողում ծանր մետաղների պարունակությունների նվազեցման տեխնոլոգիական մոտեցումների

մշակում, ինչպես նաև կատարել նմուշապատրաստման հետազոտական գործող և օպտիմալ մեթոդների շարունակական կատարելագործման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ըստ անհրաժեշտության նախատեսվում է իրականացնել գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ նաև այլ ուղղություններով:

- **Գիտաուսումնական բնույթի աշխատանքներ.**

Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների (քրեական վարույթ իրականացնող և այլ) ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների առավել որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման նպատակով 2025թ-ի ընթացքում նախատեսվում է փորձագիտական տարբեր ուղղություններով և տեսակներով կազմել նոր թեմաների ներառմամբ ծրագիր-սեղմագրեր: 2025թ-ի ընթացքում նախատեսվում է կազմվող ծրագիր-սեղմագրերի օգտագործմամբ կատարելագործել իրականացվող դասընթացները իրավասու մարմինների աշխատակիցների համար՝ ըստ գերատեսչությունների կողմից ներկայացվող առաջարկությունների:

2025թ-ի ընթացքում նախատեսվում է ներառվող նոր թեմաներին համապատասխան լրամշակել փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցման, վերապատրաստման և որակավորման դասընթացների արդյունքում ձեռք բերված գիտելիքների ստուգման քննական թեստերի հարցերը:

Փորձագետների և փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման գործընթացի որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման՝ բարձր որակավորում ունեցող փորձագետների պատրաստման նպատակով, 2025թ-ի ընթացքում նախատեսվում է շարունակաբար իրականացնել փորձագիտության բնագավառի մասնագետի, հավակնորդի վերապատրաստման կամ կատարելագործման դասընթացների նոր ծրագիր-առաջարկների մշակման աշխատանքներ՝ հաշվի առնելով ներկայիս արդի պահանջները:

2025թ-ի ընթացքում նախատեսվում է ըստ անհրաժեշտ փորձագիտության բնագավառների իրականացնել տարբեր ուղղություններով համապատասխան մասնագետների (փորձագետի հավակնորդների) նախնական գիտելիքների ստուգման հարցաշարերի լրամշակման և համալրման, նորերի մշակման, հարցերի տեսակավորման (ընդհանուր և մասնագիտական) և վերապատրաստման (կատարելագործման) փուլերի վերանայման աշխատանքները, ինչպես նաև շարունակել միջազգային փորձի ուսումնասիրությունները մասնագիտական

վերապատրաստման մեթոդների բնագավառում՝ դրական փորձը կիրառելով հավակնորդների վերապատրաստման (կատարելագործման) գործընթացում:

Նախատեսվում է շարունակաբար իրականացնել բուհական և հետբուհական կրթություն ստացող ուսանողների ուսումնառության շրջանակներում Կազմակերպությունում պրակտիկայի որակյալ անցկացման գիտաուսումնական և մեթոդական ապահովմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով դատափորձագիտական ոլորտի ժամանակակից ձեռքբերումներին և գիտական պատկերացումներին:

Կազմակերպության տնօրենի ժ/պ՝ _____ _____
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
«20» հունվարի 2025 թ.
N 1-5/25-1/NBE պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Գիտամեթոդական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 5-ում	ներկայացված է հավելված 5-ում	մինչև 31.12.2025թ.
2	Գիտագործնական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 5-ում	ներկայացված է հավելված 5-ում	մինչև 31.12.2025թ.
3	Գիտափորձնական վերլուծական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 5-ում	ներկայացված է հավելված 5-ում	մինչև 31.12.2025թ.
4	Գիտաուսումնական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 5-ում	ներկայացված է հավելված 5-ում	մինչև 31.12.2025թ.

Կազմակերպության տնօրենի ժ/պ՝ _____ (ստորագրություն) _____ (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (անուն ազգանուն)